ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-31

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «31» հունվար 2019 թ.

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան, ի դեմս նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ Ակադեմիա), որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայկական հանրագիտարան. հրատարակչություն» ՊԱՈԿ-ը, ի դեմս տնօրեն Հովհաննես Այվազյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հանրագիտական գրականության պատրաստում և հրատարակում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված 33646.6 (երեսուներեք միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ), իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնությունը, Ծրագրի առաջադրանքը, օրացուցային պլանը, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 33.646,6 (երեսուներեք միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ:

4 Մոնիթորինգ

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է Ակադեմիայի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Ակադեմիան սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	**«Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»**
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Գր. Լուսավորիչ 15
Հ/հ 900011024115	Հ/հ 90001805430
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	*ՀՀ ՖՆ գործառնական վարչություն*
ՀՀ ԳԱԱ նախագահ _____ *(ստորագրություն)*	Տնօրեն՝ _____ *(ստորագրություն)*
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՀՈՎՀ. ԱՅՎԱԶՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ *(ստորագրություն)* (ՀՈՎՀ. ԱՅՎԱԶՅԱՆ) *(անուն ազգանուն)*

Հավելված 1
«31» 01 2019թ.
N Ե–31 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Հովհաննես Այվազյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «31» հունվար 2019 թ. N Ե–31 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 33646.6 (երեսուներեք միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, ներառյալ՝ ԱԱՀ:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա	**«Հայկական հանրագիտարան. հրատարակչություն»**
Նախագահ՝ _____ *(ստորագրություն)*	Տնօրեն՝ _____ *(ստորագրություն)*
ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ**

Հավելված 2
«31» 01 2019 թ.
N Ե–31 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Հանրագիտական գրականության պատրաստում և հրատարակում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Ճյուղային հանրագիտարանների (Հայ երաժշտության և Հովհաննես Թումանյան. գրական) ավարտական աշխատանքներ և տպագրություն: Ազգային համապարփակ հանրագիտարանի բառացանկի պատրաստում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Նյութի հանրագիտական շարադրանքի գիտախմբագրական և սրբագրառճաբանական, ինչպես նաև պոլիգրաֆիական բարձր որակի ապահովում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

«Հայ երաժշտության հանրագիտարանը» ամփոփում է հայ երաժշտարվեստի պատմությունը և նրա զարգացման կարևոր փուլերը՝ վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը: Առանձին ամփոփ հոդվածներով ներկայացված են հայ ազգային, ժողովրդական, գուսանական, դասական և երաժշտության մյուս տեսակները, ոճերը, ժանրերը, դրանց տեսական ու գործնական կարևորության հարցերը, կոմպոզիտորները, երգահանները, աշուղները նն, երաժիշտ-կատարողները (անհատներ, կոլեկտիվներ, անսամբլեր նն), կոմպոզիտորական բարձրարժեք ստեղծագործությունները, ինչպես նաև ՀՀ երաժշտական ուսումնական հաստատությունները, երաժշտական մամուլը և հարակից այլ հարցեր:

«Հովհաննես Թումանյան» գրական հանրագիտարանը ներկայացնում է բանաստեղծի գիտ. կենսագրությունն ու գեղարվեստական ստեղծագործությունները, հրապարակախոսական ու հասարակական գործունեությունը, գրական ու հասարակական այն միջավայրը, որտեղ աշխատել է բանաստեղծը, մերձավորներին ու ընկերներին, ինչպես նաև թումանյանագիտությունն ու թումանյանագետներին:

«Ազգային համապարփակ հանրագիտարանի» բառացանկի նախապատրաստում, որը հանրային ու մասնագիտական քննարկումներից հետո կարող է դառնալ նոր Ազգային հանրագիտարանի հիմքը՝ մայր-բառացանկը:

Կազմակերպության տնօրեն _____ (Հովհ. Այվազյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար _____ (Հովհ. Այվազյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 3
«31» 01 2019 թ.
N Ե–31 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հանրագիտական գրականության պատրաստում և հրատարակում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1.	«Հայ երաժշտության հանրագիտարան»	Հանրագիտարանային հոդվածներ հայ երաժշտության մասին	Էջկապում, վերջնախմբագրում, արտադրական բնագրի պատրաստում	Գրքի տպագրություն	1-ին եռամսյակ	6237.5
2.	«Հովհաննես Թումանյան. հանրագիտարան»	Հանրագիտարանային հոդվածներ Հ. Թումանյանի կյանքի, գործունեության և ստեղծագործությունների մասին	Հոդվածների վերջին խմբի պատրաստում, էջկապում, արտադրական բնագրի պատրաստում	Գրքի տպագրություն	1-ին երեք եռամսյակները	12475.0
3.	«Ազգային համապարփակ հանրագիտարանի» բառացանկի պատրաստում	Եզրույթ-տերմինների ընտրություն, բառացանկի կազմում	Բառացանկի թվային տարբերակի պատրաստում	Էջկապի թվային տարբերակ	ամբողջ տարին	6237.5
Ընդամենը						24950.0

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Հովհ. Այվազյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար _____ (Հովհ.Այվազյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

---

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

Հավելված 4
«31» 01 2019 թ.
N Ե–39 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հանրագիտական գրականության պատրաստում և հրատարակում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	24950.0	*4990.0*	*6237.5*	*6237.5*	*7485.0*
2	տնտեսական և այլ ծախսեր*	3088.8	*617.760*	*772.2*	*772.2*	*926.640*
Ընդամենը (առանց ԱԱՀ)		*28038.8*	*5607.760*	*7009.7*	*7009.7*	*8411.640*
ԱԱՀ		*5607.8*	*1121.560*	*1401.950*	*1401.95*	*1682.340*
ԸՆԴԱՄԵՆԸ		33646.6	6729.320	8411.650	8411.650	10093.980

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ՀՈՎՀ. ԱՅՎԱԶՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ՄԵԼԻՏԱ ԴԱՎԹՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված 4.1
«31» 01 20.. թ.
N 15-31 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	3088.8
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*1400.0*
	գազի ծառայություն	
	ջրամատակարարման ծառայություն	*300.0*
	կապի ծառայություն	*1350.0*
	աղբահանություն	*38.8*
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	
4	Նյութեր	
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	
8	Հրատարակչական ծախսեր	24950.0
	ԱԱՀ	5607.8
Ընդամենը		33646.6

Կազմակերպության տնօրեն՝ _____ (Հովհաննես Այվազյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (Մելիտա Դավթյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված 5
«31» 01 2019 թ.
N Ե–31 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հանրագիտական գրականության պատրաստում և հրատարակում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Այվազյան Հովհաննես Մնացականի	գլխավոր խմբագիր-տնօրեն, գիտ. դոկտոր	ք. գ. դ.	165.000
2	Գուլակյան Հասմիկ Վլադիմիրի	պատասխանատու քարտուղար		102.000
3	Դավթյան Մելիտա Ներսեսի	գլխավոր հաշվապահ		102.000
4	Այվազյան Վահե Հովհաննեսի	աշխատակազմի ղեկավար		102.000
5	Խաչատրյան Լալա Սահակի	կադրերի տեսուչ-գանձապահ		42.500
6	Գևորգյան Էլմիրա Ռուբենի	տնտես. բաժնի վարիչ		78.600
7	Հարությունյան Սյուզաննա Ատոմի	ռեֆերենտ- գործավար		82.000
8	Առաքելյան Լուիզա Եգորի	ավագ գիտխմբագիր		50.000
9	Սահակյան Սահակ Ռուբենի	ավագ գիտխմբագիր		75.000
10	Խանիկյան Էսթեր Ասիկոյի	ավագ գիտխմբագիր		90.000
11	Մարգարյան Էլմիրա Գրիշայի	ավագ գիտխմբագիր		90.000
12	Գրիգորյան Մարինե Սաշայի	գիտխմբագիր		82.000
13	Մելքումյան Վալիդա Գուրգենի	բաժնի վարիչ		90.000
14	Մուշեղյան Անի Արմենի	գիտխմբագիր		45.000
15	Այունց Մարինե Ռաֆիկի	օպերատոր		40.000
16	Դրացյան Գայանե Լևոնի	բաժնի վարիչ		90.000
17	Միքայելյան Օֆելյա Դավթի	ավագ գիտխմբագիր, ոճաբան		90.000
18	Սարգսյան Ժանետա Վարազդատի	ավագ գիտխմբագիր, մատենագետ		70.000
19	Դուրգարյան Շուշանիկ Հայկի	ավագ սրբագրիչ		82.000
20	Մաթևոսյան Լուսինե Ալբերտի	գիտխմբագիր		45.000
21	Ղազարյան Աննա Սերյոժայի	վարիչ		113.000

22	Բեյբության Մարինե Համբարձումի	Շարվածքի օպերատոր		45.000
23	Աղամալյան Գայանե Արամի	Շարվածքի օպերատոր		82.000
24	Յայլոյան Անահիտ Ապետի	Շարվածքի օպերատոր		82.000
25	Թադևոսյան Սամվել Օնիկի	էլեկտրիկ		72.000
26	Հակոբյան Ջուլիետտա Գևորգի	հավաքարար		72.000
		Ընդամենը		2079.1

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ՀՈՎՀ. ԱՅՎԱԶՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ (ԼԱԼԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.